# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ»
ՀՈԱԿ-ի տնօրենի հունիսի 17-ի թիվ 39-Լ հրամանի

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հոգեբանի 0,5 դրույք թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելու մասին

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հոգեբան (0,5 դրույք) | 1)**Որակավորման պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանը պետք է ունենա՝ բարձրագույն մասնագիտական կրթություն:<br>**2) Ընդհանրական պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի պաշտոն զբաղեցնողը պետք է իմանա,տիրապետի<br>ա/ «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Լիցենզավորման մասին» «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքները.<br>բ/ նախադպրոցական կրթական չափորոշիչները և իր պաշտոնային պարտականություններին վերաբերող նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր.<br>գ/ ընդհանուր և մանկավարժական հոգեբանություն, ընդհանուր մանկավարժության,անձի և դիֆերենցիալ հոգեբանության, տարիքային և մանկան հոգեբանության,սոցիալական հոգեբանության | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,<br>2)դատական կարգով զրկվել է մասնագիտական գործունեությամբ զբաղվելու իրավունքից,<br>3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը,<br>4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | 1)դիմում (Ձև1)<br>2)անձը հաստատող փաստաթուղթ.<br>3)կրթության մասին փաստաթուղթ<br>4)աշխատանքային ստաժի մասին տեղեկանք/առկայության դեպքում/<br>5)ինքնակենսագրություն (ձև4)<br>6) մեկ լուսանկար՝ 3×4 չափի<br>7)այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,<br>8)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,<br>9)հրատարակված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հիմունքները․<br>դ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին։ | | հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)։ |
| | | Նախադպրոցական ուսումնական հաստատության հոգեբանի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները։ | | **Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով։** |
| 2 | **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը** | | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները** |
| | **Վայրը՝ ՀՀ ՇՄ Ախուրյան համայնքի Ազատան բնակավայր,19 փողոց, 17/3 շենք<br>Օրը՝ 2024 թվականի հուլիսի 23-ին,<br>ժամը՝13:30** | Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել՝ **ՀՀ ՇՄ Ախուրյան համայնքի «Ազատանի Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ<br>19 փողոց, 17/3շենք<br>Հեռ.094002600<br>Հարցաշարերը ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «25» մարտի 2022 թվականի N471-Ա/2 հրաման։<br>Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ և կիրակի** | | **2024 թվականի հունիսի 18-ից հուլիսի 17<br>-ը ներառյալ** |